



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԴԵՊՒ ՄԱՍՍԱՆԵՐԸ

ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴՐՁՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՇԱՎԻ
№ 1 ԵԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

ՓՈԽԱՐԻՆՈՂՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Փոխադր. Մ. Դ.

Գ Լ ՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929

11

ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԴԵՊԻ ՄԱՍՍԱՆԵՐԸ

ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ


371.398

ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ԱՐՇԱՎԻ

№ 1 ԵԺՆԵԳԻՆ ԳՐԱԳՐԱՆ Ու 1

ՓՈԽԱՐԻՆՈՂՆԵՐԻ
ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Փոխադր. Մ. Դ.



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929



Համ. № 1067

ՊԵՏՏՐԱՏԻ II ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառեզվ. № 2749 (բ.)

Պատվ. № 1014

Տիրամ 5000

I

«Մանուկները մեր ապագան են», — հաճախ ասում ենք մենք:

Հանուն նրանց, ամբողջ աշխարհի լերեխաների, ապստամբել ու պայքարել ե բանվոր դասակարգն իր դարավոր ճնշողների դեմ:

Բոլոր լերկրների պրոլետարները նրանց (յերեխաների) համար են ձգտում վոչնչացնելու հին կապիտալիստական հասարակարգը և նրա բեկորների վրա ստեղծելու կոմունիստական նոր հասարակարգ, ուր մարդը մարդուն չի շահագործելու, ուր ստորկական աշխատանքին փոխարինելու չե ազատ ու հաճելի աշխատանքը, ուր ամեն մեկն աշխատելու չի իր և հասարակութան համար

ըստ իր ուժերի և ընդունակութիւնների և
բավարարվելու յե ըստ իր կարիքների:

Նրանց, ալդ չերեխաների համար վոտ-
քի չելավ Խորհրդային Միութիւնը 1917
թվի հոկտեմբերին կապիտալիստների ու
կալվածատերերի դեմ, վոտքի չելավ ու
հաղթեց:

Նրանց համար ե ալժամ նոր պետութիւն
կազմակերպում ԽՍՀՄ բանվոր դասակարգը
և հաղթահարելով բոլոր արգելքները՝ արագ
քայլերով նոր կյանք ե կառուցում:

Ուստի և հասկանալի չե այն խնամքն
ու հոգատարութիւնը, վոր ցուցաբերում են
դեպի մատաղ սերունդը բանվոր դասա-
կարգը, նրա իշխանութիւնը, նրա կուսակ-
ցութիւնը, — դեպի նրանք, ում հանձնելու
չե այն ամենն, ինչ կարողացել ե նվաճել,
ինչ կարողացել ե կառուցել:

Յեւ ժառանգները շարունակելու չեն
նրա զործը, հասցնելու չեն իր վախճանին,
մինչև կկառուցեն կոմունիստական հասա-
րակակարգ:

II

Խորհրդային իշխանության հոգատարությունը դեպի լեռնաշխարհն սկսվում է հենց ծնվելու րրից և տևում է մինչև յերեխայի չափահաս դառնալը։ Առաջին շաբաթները մայրն ազատվում է աշխատանքներից, վորպեսզի կարողանա ամբողջովին նվիրվել լեռնաշխարհին, աչնուհետև նա հնարավորություն է ստանում վորոշ ժամերին թողնել աշխատանքը լեռնաշխարհի կերակրելու համար։

Ծնվելուց հետո լեռնաշխարհն «ոժիտ» է ստանում, իսկ աչնուհետև մինչև 9 ամիս լրանալը սննդադրամ է ստանում կամ նրա արժեքով մթերքներ։

Այն լեռնաշխարհերը, վորոնք այս կամ այն պատճառով զուրկ են մայրական խնամքից, մինչև 3 տարին լրանալը տեղավորվում են մանկական մսուրներում։ Իսկ հետզհետե ծավալվող մանկապարտեզներն ու

մանկհրապարակները նպատակ են դնում
դաստիարակել 3—8 տ. չերեխաներին:

Ութ տարեկան չերեխան դպրոց ե մըտ-
նում. խորհրդ իշխանութիւնը վոչինչ չի
խնայում, վերաբերելի վոչ մի չերեխա դու-
սը չմնա. հանրամատչելի դպրոցն ալ ժմ
փաստ ե, իսկ մոտ ապագայում կհայտա-
բարձի նաեւ պարտադիր ուսում:

Դպրոցը մի շարք միջոցներ ե ձեռնար-
կում, վերաբերելի ուսումն ալելի կենսական,
հետաքրքրական ե չերեխաների պահանջ-
ներին ու ընդունակութիւններին համա-
պատասխան լինի: Հարստանում են կա-
հույքը, իրազննական պիտույքները, կազ-
մակերպում են արհեստանոցներ, չերեխա-
ների ինքնագործունեյության ասպարեզ ե
տրվում:

Դպրոցի աշխատանքը լրացնում, չերե-
խաների ժամանցը խելացի կերպով ոգտա-
գործելուն են նպաստում մանկակումբը,
մանկսենյակը, մանկհրապարակը, խմ-
բակները ե ալլն:

Դժվար ե թվել այն բոլոր բաղմազան
միջոցները, վոր գործադրում ե խորհրդ-
աշային իշխանությունը յերեխաների հոգա-
տարության նկատմամբ:

III

Սակայն չեթե հարց տանք—ի՞նչ նվա-
ճումներ ենք ձեռք բերել այս ասպարիզում,
ի՞նչ չափով են վերոհիշյալ հիմնարկներն
ընդգրկել յերեխաներին, բավարար ե այդ
հիմնարկների ցանցը, —միայն մի պոտա-
ստան ենք տալու՝ իհարկե, վոչ:

Ճիշտ ե, այժմ չենք գտնիլ մե յերեխա,
վորին այս-այն կերպ չվերաբերի դաստիա-
րակչական աշխատանքների մեկ կամ մյուս
ձևը, սակայն լրիվ ընդգրկումից դեռ շատ
ձեռու չենք:

Այս բանը նկատելի չե մանավանդ նա-
խադպրոցական (մանկապարտեզ) և արտա-
դպրոցական (մանկակումբ, հրապարակ,
մանկական կինո և թատրոն, դաստիարա-
կության վերաբերմամբ:

Մոսկվայում մանկապարտեզներն ընդ-
գրկել են նախադպրոց. տարիքի յերեխա-
ների միայն 6 ու կես 0/0, Յերևանում՝ ա-
վելի պակաս: Ռուսաստանում նույնիսկ 10/0
չի ընդգրկված, Հայաստանում մոտ 3 0/0:
Նույնիսկ մանկհրապարակները, վորոնց
թիվն այս (29 թ.) ամսուը հասնում եր հա-
րյուրների (Հայաստանում 200-ից ավելի)
ու հազարների (Ռուսաստանում՝ 7—8 հա-
զար), ընդգրկում ելին 4—8 տ. յերեխանե-
րի 7—10 տոկոսը: Ավելի վատ վիճակումն
են մանկթատրոնն ու կինոն, մանկակումբը,
մանկական սենյակներն ու անկյունները՝
դպրոցներում, բանակումքներում, բնակ-
միություններում և այլն:

Պետությունն այնքան միջոցներ չունի,
վոր ավելի լայն ծավալի այդ աշխատանք-
ները:

Անդրկովկասյան հանրապետություննե-
րի կենտրոններում միայն վերջին տարի-
ներս կազմակերպվեցին մանկական թատ-
րոններ. մեզ մոտ այդ աշխատանքը նոր և

սկսվում. մեր ակումբները դեռևս չունեն
մանկական սենյակներ, գործարաններ՝
մանկմուրներ ու մանկապարտեզներ (բացի
Լենինականի տեքստիլ գործարանից):

Իսկ այս բոլորն անհրաժեշտ է, այս
մասին տարբեր կարծիք չի կարող լինել:

Ո՞ւր է յեղքը:

Կա միայն մեկ յեղք:—Ներդրավել այս
աշխատանքներում խորհրդային լաջն հա-
սարակայնությունը: Պրոֆմիությունները,
կոոպերացիան, կամավոր ընկերություն-
ները, վերջապես ամեն մի բանվոր,
բանվորուհի, գյուղի ու քաղաքի աշխատա-
վորուհիները, մայրերը, — բոլորը պետք է լրծ-
վեն աշխատանքի՝ չեբեխաների կյանքն ու
դաստիարակության պայմանները բարելա-
վելու համար:

Բոլորն ոգնելու յեն պետութջանը:

Այս ոգնությունը շատ բազմազան է:
Նյութական ոգնություն—գրամով, գույ-
քով, միտքով: Կենդանի աջակցություն,
իրական աշխատանք, աջակցություն՝ պրո-

պատգանդալի միջոցով: Վերջապես մասնակի
ոգնություն, հոգատարություն իր տանը,
իր չերիխալի նկատմամբ—ավելի խնամք,
ավելի նորմալ պայմաններ ստեղծելու նը-
պատակով:

Ներկայումս ամբողջ ԽՍՀՄ հայտարա-
րել է նախադպրոցական արշավ, վորի գըլ-
խավոր նպատակն է ընդարձակել նախա-
դպրոցական հիմնարկների ցանցը:

Թող բանվորներն ու բանվորուհիները,
ակտիվ գեղջկուհիներն ու աշխատավոր
մայրերը մասնակցին նախադպրոցական
արշավին:

Թող պահանջին իրենց պրոֆմիտություն-
նից, գործարկումից, կոոպերատիվից, բը-
նակմիտությունից վորոշ ոգնություն նա-
խադպրոցական գործի կառուցման համար,
թող իրենց սուղ միջոցներից էլ բաժին
հանեն:

Թող հոգան շենքի խնդիրը, գտնեն
մանկսենյակ, պահանջեն ակումբից, միտ-
թյունից, վարչությունից. թող ոգնեն

մանկհիմնարկին սննդի, կահավորության
ու ալ ծախսերի մեջ:

Զիւցեցեմք, վոր Գախազարցական ար-
եւելք ձեր աճանական, հարազատ խնդիրն
է, քանի վոր նա վերաբերում է ձեր յերե-
խաներին:

Սակայն պրոլետարական պետությունն
ու բանվոր դասակարգը չեն բավականանալ
միայն յերեխաներին հասարակական դաս-
տիարակության հիմնարկներում ընդգրկե-
լով, կարեւորն այն է, թէ ինչ ուղղութեամբ
են դաստիարակվում, ինչպիսի փոխարի-
նողներ են պատրաստվում: Արդարեւ, չե՞
վոր ծանր կորուստներով ձեռք բերված իշ-
խանությունը պետք է ժառանգի նոր սե-
րունդը, պահի իր ձեռքում և ամրացնի այն:

Յեթե պրոլետարիատը սոցիալիստական
հասարակակարգ է կառուցում, պետք է նոր
սերունդը շարունակի այդ և իր վախճանին
հասցնի:

Պետք է վոր, հարկ չիղած դեպքում, նոր
սերունդը գենքի դիմի և իր գործը պաշտ-

պանի բանվոր դասակարգի ու պրոլետարական հեղափոխութեան թշնամիներից:

Պետք է վոր մեր դեռահաս սերունդը, ԽՍՀՄ բանվորութեանից ժառանգութեուն ստանալով, տեղին ու ժամանակին ոգնութեուն կարողանա ցուցադրել արտասահմանի բանվորներին՝ պրոլետարական հեղափոխութեան մարտակից մեր յեղբայրներին:

Այսպիսի սերունդ են դաստիարակելու մեր մանկհիմնարկները:

Արվիւմ ե աչս: Այո, արվում ե: Բաւարմը չափով: Վոչ, բաւարար չեն աչս ամենը: Յեւ զժրախտաբար դեռևս մոտիկ տարիներին մենք չենք կարողանալու ասել, թե մեր մանկհիմնարկները բաւարար չափով իրագործում են աչս դաստիարակչական խնդիրները:

Ահա թե ինչու մենք փնտռելու յենք այլ ուղիներ՝ յերեխաներին կոմմունիստական վոգով դաստիարակելու համար:

Այս բանում մեծ դեր ե խաղում մանկ. կոմմունիստական շարժման զարգացումը:

Պիոնեռ-վաշտ — ահա պրոլետարիատի
արժանավոր ոգնականը նոր սերնդից մար-
տիկներ ու հեղափոխականներ, կոմմունիս-
տական հասարակակարգի ապագա շինարար-
ներ պատրաստելու գործում:

IV

Ի՞նչ է անում պիոնեռկազմակերպու-
թյունը: Ի՞նչ են նրա խնդիրները: Ի՞նչ է
տալիս և ի՞նչ է պահանջում իր՝ կազմակեր-
պության անդամից:

Նոր պետութւյան կառուցման համար ան-
հրաժեշտ է գիտություն, ամհրաժեշտ են
գիտելիքներ: Պիոնեռ-վաշտն ասում է յու-
րաքանչյուր անդամի. «Լնվ սովորիր, ջա-
նասեր յեղիր. լեթե դժվարանում ես, քեզ
կոգնենք»:

Նոր սերունդը շարունակելու յե պրոլե-
տարական հեղափոխության գործը, և մենք
ասում ենք պիոնեռին. «Հեղափոխական
դարձիր, որինակ վերցրու կոմմունիստա-

կան կուսակցութեան և կոմիւնիստական պատկանող հայրերիցդ ու յեղբայրներիցդ, սովորիր նրանցից, թող քեզ վարակի նրանց հեղափոխական խանդավառութիւնը»:

Պրոլետարիատի դասակարգային թշնամիների կողմից դեռևս անհնար չէ խորհրդային Միութեան վրա հարձակվելը, և մենք ասում ենք պիտներին. «Պատրաստ յեղիր դենքով պաշտպանելու սկսած գործը, ձեռք բեր ռազմական ունակութիւններ ու գիտելիքներ, վոր քեզ պետք կզան հետագայում. այժմ ել պատերազմի դեպքում դու բավականաչափ պիտանի կլինես յերկրի պաշտպանութեան գործում»:

Մեր Միութեան տնտեսութիւնը նոր ուղիների վրա յե դրվում: Յերկրի ինդուստրիացումը հնգամյա պլանի հիմնական խընդիրն է: Մեր յերեխաները մանկութեան տարիներից պիտի իմանան վարել մեքենան, գիտենալ նրա կառուցվածք: Այդ պատճառով ել պիտներ-վաշտը տեխնիկայի ասպարիզում զբաղմունքներ և կազմակեր-

սլում պիտներներէ հետ, սոցիալիստական
շինարարութեան ասպարիզում նրանց գործ-
նական աշխատանքներն և կազմակերպում:

Մենք պետք և դաստիարակենք ֆիզի-
կապես առողջ սերունդ, և պիտներ կազմա-
կերպությունը մի շարք միջոցներ և ձեռ-
նարկում (ֆիզիկուլտ, սպորտ, ճամբար և
այլն), վորոնց նպատակն և առողջացնել ու
ամրացնել յերեխային:

Վերջապես, յերեխաները պետք և ձեռք
բերեն կյանքի ու կոլլեկտիվում աշխատե-
լու համար բոլոր անհրաժեշտ հատկութեան-
ները և պետք և զերծ մնան այն ամենից,
վոր խանգարում և այս բանին: Այդ պատ-
ճառով ել մենք ասում ենք պիտներին. «Յի-
դիր քաղաքավարի, կիրթ ու ճշտապահ,
խուլիգանություն մի անիլ, մի, ծխի, խը-
միչքներ մի գործածի, սովորիր միասին
աշխատել, անձնական շահերդ կոլլեկտիվի
շահերին չենթարկել»:

Միթե այս պահանջներն արդարացի
չեն, միթե նրանք չեն ոգնում ծնողներին

դաստիարակչական գործում: Ահա թե ինչու անթույլատրելի չե, յերբ անգիտակից ու մութ ծնողն արգելում ե իր չերեխային «պիտներ գրվել»: Չպետք ե արգելել, ալլ ամեն կերպ աջակցել ու խրախուսել, ոգնել չերեխային, վոր նա կատարի պիտներ-կանոնադրության պահանջները, աչս բանի համար պետք ե հարմարություններ ստեղծել տանը.— ահա թե ինչ ե անելու բան-վորի ընտանիքը իր չերեխայի նկատմամբ:

V

Ոգոստոսի վերջերին (1929 թ.) Մոսկվայում տեղի ունեցավ պիտներների համամիութենական հավաքը: Սա—հսկայական ու կարեւոր գործ եր: ԽՍՀՄ բոլոր ծայրերից խմբվեցին հազարավոր պիտներներ:

Հավաքը պարզեց մանկական կոմսունիստական շարժման վիճակը, ամփոփեց աշխատանքների արդյունքները և նշեց պիտների կազմակերպությունների ընդլայնման հետագա ուղիները:

Հավաքը հաշվի առավ անկազմակերպ
չերեխաների մեջ տարվող աշխատանքները,
տարբեր խմբերի չերեխաների կարիքներն
ու պահանջները, — բանվորների ու գյուղա-
ցիների, բառրակների չերեխաների, անա-
պատանների, ցրիչների, տնային ծառա-
յողների, «աշկերտների», լրագրավաճառնե-
րի և այլն:

Հավաքն ուշադրությամբ նշեց՝ ինչ է
արված և ինչ է արվելու չերեխաների հա-
մար: Շեշտովեց, վոր մեր 5-ամյա պլանում
քիչ տեղ է տրված մանուկներին, պիոներ-
ներին, և այդ բացը ծածկելու համար ար-
դեն գործնական քայլեր են արվում:

Պարզեց, վոր մեր չերեխաների առող-
ջացման ու դաստիարակության գործում
դեռևս շատ բան են անելու լուսավորու-
թյան ու առողջապահության որդանները,
պրոֆմիթյունները, կոոպերացիան և մյուս
կազմակերպությունները:

Հավաքը զարկ կտա մանկ. կոմմունիս-
տական շարժման լայն զարգացման ու աճ-



ման, մանկական հիմնարկների (նախադըպ-
րոցական և արտադպրոցական) արագ ծա-
վալման և չերեխաների հետ տարվող դաս-
տիարակչական աշխատանքների բարելավ-
ման:

Ահա թե ինչու պիտենք հավաքն այդքան
մոտ պիտի լինի յուրաքանչյուր բանվորի
սրտին. չե՞ վոր նրա չերեխայի կենսական
պահանջներն ու շահերն ե արտացոլում:

Յեվ այն ժամանակ, չերք Խորհրդային
Սոցիալիստական Հանրապետությունների
վողջ Միության ուշադրությունը բեհռած
եր սոցիալիզմը կառուցողների աճող շար-
քերի վրա, Անգլիայի Թագավորական կա-
ռավարությունը (իբեն բանվորական ան-
վանող) և Ավստրիայի սոցիալ-դեմոկրատ-
ները նույնպես իրենց զավակների հավաքն
հն կազմակերպում, վորպեսզի նրանց պատ-
րաստեն կապիտալիստական կարգերի
պաշտպանության համար: Յեվ այդ պատ-
ճառով ել ավելի խանդավառ եր մեր պիո-
ներների ընդունելությունը, ել ավելի հո-

յակաղ ու նշանակալի չեր մանկական
միջազգային կոնգրեսսը, Վոր յեղակի տեղ
և բռնում մանկական կոմմունիստական
շարժման պատմության մեջ:

Պիոներ-հավաքից հետո առավել ևս
պարզ ու վորոշակի պետք է ասենք.

Լայնացնել եեղափոխական պրոլետարիա-
տի արժանավոր փոխարինողների դաստիա-
րակման աշխատանքները:

Ճանապարհի մանկական կոմմունիստա-
կան շարժմանը:

Բանվորների ջերմագին վողջույն ու
ամենալայն աջակցություն պիտո՞նք հա-
վաքի յեվ նախազարոցական արեւմի շար-
քերին, նրանց բոլոր ձեռնարկություն-
ներին:

ՊԵՏՔ Ե ԿՐՈՆԸ ՅԵՐԵԱՆԵՐԻՆ

Կրօնն ստեղծվել է դարերում: Տիրող դասակարգերը դարերի ընթացքում դանազան միջոցներ են հնարել անհայտ գերբնական ուժերի միջոցով ստրկացրած մասսաներին շահագործելու նպատակով:

Հեթանոսների (կուսակաշտների) կուռքը, քրիստոնեական սրբերը, հրեական դաժան Յեհովան, — այս բոլոր աստվածները միայն միջոցներ էին հանդիսանում տգետ մասսաների մեջ վախ առաջացնելու, վորպեսզի աստվածների անունով հեշտ լինի նրանց շահագործելը:

Մեր չերեխաներն այժմ շատ լավ գիտեն, վոր ժարդը հաղթահարում է բնությանը շնորհիվ շատ սերունդների լարված աշխա-

տանքի և գիտութեան միջոցով մեզ հայտ-
նի բնութեան որենքներն:

Մարդու խելքն ու ստեղծագործական ու-
ժերը հաղթահարել ու հպատակեցրել են
բնութեան ուժերը:

Մենք գիտենք, Վոր գոյությունն չունի
այնպիսի յերկինք, ուր վրիժառու աստվածն
ե բազմել իր հրեշտակներով: Ողանավորն
այժմ անարգել սավառնում են այդ չեղ-
կընքում ու ճեղքում են ամպերը:

Այժմ կան կարկտացիք ու անձրևաբեր
միջոցներ, և մեզ համար ծիծաղելի չեն այն
հեքիաթները, ըստ վորոնց անձրևն ուղար-
կում եր աստված:

Մեքենաներն ու հողի մշակման նոր ձե-
վերը բարձրացնում են բերքատվութունը:
Մարդու ուղեղն ու աշխատանքը կայծակի
հուրն ելիկտրականութեան հոսանքի վե-
րածեցին:

Եւ ինչո՞ւ զբաղեցնել չերեխայի մատաղ
միտքն աստվածների ու հրեշտակների հե-
քիաթներով, վորոնք «և՛ պատժում են, և՛
պահպանում»:

Թող մանուկները բաց աչքերով տեսնեն
աշխարհը, այն աշխատավոր մասսաները,
վորոնք համառ պայքար են տանում թշնա-
միների դեմ՝ իրենց լավագույն ապագայի
համար, վորոնք նվաճում են բնության
ուժերը՝ բոլոր աշխատավորների կյանքն
ու աշխատանքը բարելավելու համար:

Յերբ չերեխան մեզ հարց ե տալիս՝ աստ-
ված կա՞, —մենք պետք ե պարզ ու վորոշ
պատասխանենք՝ վոչ: Դժոխքն ու դրախտը
հնարել են աշխատավորների թշնամիները,
վորպեսզի անդրգերեզմանալին կյանքով
սարսափեցնեն իրենց դիմադրողներին, ստի-
պեն նրանց՝ հանուն յերկնային հառուց-
ման՝ տանել չերկրում շահագործման լուծը,
տանջվել և հուսալ, վոր այդ բոլորը տես-
նում ե ու կվարձատրի «ամենատես աստ-
վածը»:

Մեր չերեխաների ապագան պայծառ ե:
Այդ ապագան ծանր գնով ձեռք են բերել
հայրերն ու մայրերը, վորոնք անաստված
լինելով, բուռն հավատ ունեցին դեպի ի-

րենց դասակարգի ուժը, վորոնք չվախե-
նալով աստվածային պատժից, կործանեցին
բռնակալների լուծը, նրանց հետ նաև աս-
տրծուն ու սատանային:

Յերեխաներին պետք է պատմել վոչ թե
«վարք սրբոցի» և նման հիմարություննե-
րի մասին, այլ այն մասին, թե ինչպես է
պալքարում բանվոր դասակարգը, և ինչ բա-
նի չե ընդունակ մարդկային հանճարը:

Մենք գեռ չենք վտարել մեր առօրյայից
հնացած ծեսերն ու չիկեղեցական տոները:
Պինդ կպիլ ենք «ծննդին» ու «զատկին»:
Այդ հավատալիքները հաղորդում ենք նաև
մեր յերեխաներին:

Ինչ՞ու չեն պետք այդ հավատալիքները:

Չե՞ վոր յերեխաներին դաստիարակում
ենք պալքարի և կոմունիզմի կառուցման
համար:

Ուրեմն նրանց պետք են մյլ տոներ:

Այդ տոներն են այն որերը, վոր պատ-
մում են աշխատավոր մասսաների հաղթա-
նակի, նրանց կյանքի բարելավման փոր-
ձերի ու ջանքերի մասին:

Հին չեկեղեցական տոները վարպետորեն
եյլն տոնում, — շուքով ու փալով, յերգ ու
ծեսով, նվերներով ու քաղցրեղեններով,
սպասուհիներով ու ալցելութուններով, վոր-
պեսզի գրավիչ ու հանդիսավոր լինեն: Ծե-
սերն ու «խորհուրդները» պարտադիր կեր-
պով յուրացվում եյին և սերտ կապվում
կենցաղի հետ:

Մեր խորհրդային տոներն աշխատավոր-
ների հաղթանակի ու ցնծության տոներն
են և պետք է նույնքան գրավիչ ու հան-
դիսավոր լինեն, ինչքան հին ու անմիտ
տոներն եյին. պետք է այնքան սերտ ձուլ-
վեն մեր կենցաղի հետ, վոր վանեն հին
սովորույթները:

Մեր տոները հարբեցողության ու խըն-
ճուլքների որեր չեն: Իրենց եյությամբ
նրանք վողջ աշխատավորությունը միացնում
են մի հզոր կոլլեկտիվում: Թող իրենց տո-
ներն աշխատավորությունը դուրս գա տոնա-
կան շորերով: Թող հնչի յերաժշտությունն
ու յերգեցիկ խումբը, թող մեր խանդավառ

ցույցերն ու միտինգները ժողովրդական տոների վերածվեն և նոր հաղթանակների ուժ ներշնչեն:

Թող չերեխաները դիտեն խորհրդային տոները: Նրանք կընդորինակեն իրենց խաղերում: Մանկապարտեզի մի չերեխա՝ «զատիկ» խաղալու առաջարկի առթիվ պատասխանեց ընկերոջը. «Ինչիս ե պետք քո զատիկը: Ուտում են ու նստում տանը կամ հյուր գնում: Յես խաղալու չեմ բալլընիկների տոներ, և բոլորս կգնանք կարմիր դրոշներով դեպի հրապարակ»:

Շատերը գանգատվում են, վոր հարեաններն իրենց կրոնամոլությամբ խանգարում են չերեխաներին հակակրոնական դաստիարակութլուն տալուն:

Այդ փաստակար ազդեցութլունների դեմ պետք ե պայքարել: Անաստվածների կազմակերպության միջոցով ձեր տանը անաստվածների բջիջ հիմնեցէք: Թող ձեր չերեխաներն իմանան հավատացյալների մոլորութլունների, կրոնի փասաների մասին: Թող

հաստատու առանցողողող կերպով ներշնչվեն
շրջապատի ճշգրիտ ըմբռնումով. այն ժա-
մանակ հենց իրենք յերեխաներն ամենա-
վաղ տարիքում կկարողանան պաշտպանել
իրենց համովմունքները:

ԱՂԶԿԱ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային իրավակարգում շատ բան ե
արված կ'ընջ սպասարկման համար, բայց և
այնպես մենք դեռևս չենք կարող ասել,
թե կ'ինը հասարակական կյանքում փաս
տորեն իրավահավասար ե: Ուր ել վոր վեր
ցընեք—արտադրության մեջ, հասարակա
կան աշխատանքներում թե առորջայում,—
ամենուրեք կ'ինը փաստորեն չի ոգտվում
այն իրավունքներով ու հնարավորութուն
ներով, վորոնցով ոգտվում ե տղամարդը:

Վերտեղ փնտռել այս անհավասարության
պատճառները: Իհարկե, ամենից առաջ՝ ան
ցյալում: Դարեր շարունակ դաստիարակ
վելով իրավապուրկ վիճակում՝ կ'ինը հնա
րավորություն չի ունեցել հավասար վիճակ
ստեղծելու. դեռևս մեծ աշխատանք ե պետք

տանել այդ ուղղութեամբ: Այս դաստիարակչական աշխատանքը ներկայումս տանում են կուսակցութիւնը, պրոֆմիութիւնները, խորհուրդները և մեր վողջ հասարակացութիւնը: Մեր ապագա սոցիալիստական հասարակակարգի համար պետք է դաստիարակել ֆիզիկապէս առողջ, աշխատանքային ձգտումներով խմորված կնոջը, վորը պատրաստված լինի հասարակական աշխատանքի համար և կարողանա մայրութեան հետ համատեղել իր հասարակական և արտադրական աշխատանքը:

Այսպիսի կնոջ մենք կարող ենք դաստիարակել, չեթե աճող փոխարինողների հետ վաղ մանկութիւնից ճիշտ մեթոդներով սկսենք մեր աշխատանքը: Ամենավաղ տարիքից պետք է տղաների ու աղջիկների մեջ դաստիարակենք մտերիմ, ընկերական հարաբերութիւններ, հավասարապէս պատրաստենք նրանց կյանքի պայքարի համար:

Այս խնդիրը մեր պետութիւնն իրականաց-

նում եսոցիալական դաստիարակության հիմունքների միջոցով: Իեռևս ձեկերության շրջանում, այնուհետև մանկապարտեզում ու դպրոցում և, վերջապես, համալսարանում աղջիկը դաստիարակվում է տղայի հետ միասին:

Բայց չե՞վոր յերեխային դաստիարակում են վոչ միայն դպրոցն ու մանկապարտեզը, այլ և շրջապատը, միջավայրը — ընտանիքը, փողոցը, ընկերները, հասարակական վայրերը: Ի՞նչպես է արդի ընտանիքը լուծում յերկսեռ դաստիարակության խնդիրը: Արդի ընտանիքը մեծ մասամբ չի ծանրանում այն խնդրի վրա, թե ինչ է ստացվելու իր չերեխաներից: Քիչ չեն այն ընտանիքները, վորոնք աղջկա վրա նայում են՝ իբրև ապագա կնոջ ու մոր և տնտեսուհու վրա, դանազան պատրվակներով նրա համար «ոժիտի» պատրաստութունն անելով: Բավական է դիտել չերեխաների տնային աշխատանքները, և մենք հսկայական տարբերութուն կնկատենք տղայի ու աղջկա դրության մեջ: Մինչդեռ տղաներն անարգել հաճախում են պիոներական կամ խմբա-

կային պարսպմունքներին, պարզվում են ֆիզիկո-լոգիկական կամ սպորտով, աղջիկը նստած ե տանը՝ տնային աշխատանքներով ծանրաբեռնված: Արդյունքն այն է լինում, վոր աղջիկը թույլ ունակություններ ե ունենում հասարակական աշխատանքներում: Այս բանն, իհարկե, նկատելի չե դառնում, յիւր նա հասունանում, կին ե դառնում: Այդ պատճառով ել մեր բարձրագույն հիմնարկներում շատ քիչ են կանայք, չնայած ԲՈՒՀ-երի դռները բաց են թե տղաների, թե աղջիկների առաջ հավաստրուպես: Ուրեմն արդի ընտանիքն իր դաստիարակության մեթոդներով չի նպաստում պետութւյան առաջադրած խնդին՝ նոր սիրնդի ճիշտ դաստիարակութւյան գործում:


Յուրաքանչյուր ընտանիք, հատկապես յուրաքանչյուր մայր մտածելու չե այս մասին ե հարց ե տալու ինքն իրեն՝ ո՞ւմ ե դաստիարակում: Այս հարցը լուծելուց հետո նրա առաջ կծառանա մի ուրիշ հարց՝ Ի՞նչպես պետք ե տրվի կանոնավոր դաս-


տիարակությունը, վոր համառորեն պահանջում ե կյանքը:

Ընտանիքում ես պետք ե աղջկան իրավահավասար դարձնել՝ նրա ե յեղբայրների մեջ հավասարապես բաշխելով իրավունքներն ու պարտականությունները (աշխատանքը):

Պետք ե աղջկան ես հնարավորություն տալ վերջացնելու իր կրթութիւնը, վորպեսզի ապագայում նա ես դառնա արտագրութչան վորակյալ բանվոր:

Անհրաժեշտ ե, վոր աղջիկը ես տղային համընթաց լինի հասարակական կյանքում: Այս միջոցով աղջիկը ես ձեռք կբերի հասարակական աշխատանքի ե կգլխիկտիլ կլանքի ունակութիւններ, վոր այնքան անհրաժեշտ ե նրան ապագայում:





ԳԱՆ Հիմնարար գիտ. գրադ.



FL0038201

20643

Воспитание смены

A $\frac{I}{3605}$



ԳԻՆԸ 5 Կ.